https://doi.org/10.46991/S&L/2020.87.091

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՂԿԱՑԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՈՒՄԸ

Տաթևիկ Գևորգյան
Արցախի պետական համալսարանի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

Հանցակազմերն ունեն տարբեր դասակարգումներ: Դրանցից մեկը հանցակազմերը պարզերի ու բարդերի դասակարգելն է: Ե՛վ մեկը, և՛ մյուսը եզակի հանցագործություն են նկարագրում և տարբերվում են միայն կառուցվածքով: Պարզ հանցակազմերում հանցակազմի բոլոր տարրերը ներկայացված են եզակի թվով՝ մեկ օբյեկտ, մեկ գործողություն (անգործություն), մեկ հանրորեն վտանգավոր հետևանք և մեղքի մեկ ձև: Բարդ հանցակազմերի կառուցվածքն արտահայտվում է հանցակազմերի այս կամ այն տարրը բազմապատկելով, ինչը նրանց չի զրկում միասնական (եզակի) հանցագործության հատկանիշից[1]:

Բարդ հանցակազմերով նկարագրված հանցագործություններ են բաղկացական հանցագործությունները: Աշխատանքի խնդիրը բաղկացական հանցագործությունների որակման կանոններ ձևավորելն է: Սակայն դա հնարավոր չէ անել առանց բաղկացական հանցագործությունների հիմնական հատկանիշներն ու տեսակները բնորոշելու:

Բաղկացական հանցագործությունների թվին են պատկանում հանցանքները, որոնք կատարվում են այնպիսի եղանակների միջոցով, որոնք ինքնուրույն հանցագործություն են և նախատեսված են հանցակազմում. հանցագործություններ, որոնցում երկրորդ՝ ավելի ծանր հետևանքները նախատեսված են որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք, հանցագործություններ՝ երկու օբյեկտներով, հանցագործություններ՝ այլընտրանքային տարրերով, տևող և շարունակվող հանցագործություններ, հանցագործություններ՝ ահաբեկչական և ծայրահեղական ուղղվածությամբ:

Բաղկացական հանցագործությունները միասնական կամ եզակի հանցագործություններ են, որոնք բաղկացած են երկու կամ ավելի հանցագործություններից, որոնք օրգանական փոխկապակցվածության ուժով համալիր վնաս են պատճառում մեկ օբյեկտի: Հենց օբյեկտի միակ լինելու փաստն է նրանց դարձնում միասնական, եզակի:

Բաղկացական հանցագործությունների բնութագրման համար և՛ ՌԴ, և՛ ՀՀ, և՛ ԱՀ քրեական օրենսգրքերն օգտագործում են «զուգորդված» և «կապված» եզրույթները: Զուգորդվածության հատկանիշը նշված է, օրինակ, ԱՀ քր. օր.-ի հոդ. 103-ի մաս 2-րդ-ի, կետ «3»-ում՝ սպանություն՝ զուգորդված մարդուն առևանգելով կամ պատանդ վերցնելով, կամ կետ «8»-ում՝ զուգորդված շորթմամբ, ավազակությամբ կամ բանդիտիզմով և այլն:

Երեք բաղկացական հանցագործությունների մեջ՝ ահաբեկչություն (հոդ. 225), ավազակություն (հոդ.181) և զանգվածային անկարգություններ (հոդ. 234), օրենսդիրը հանցակազմերը ձևավորում է այլընտրանքային գործողությունների միջոցով կամ «զինված հարձակում» մեկ ընդհանրացված եզրույթով: Ինչպես տեսնում ենք, հանցակազմերի բնութագրման համար օրենսդիրն օգտագործում է իրավաբանա-

---

[1] Տե՛ս **Кузнецова Н.Ф.**, Проблемы квалификации преступлений, Москва, 2007:

կան տեխնիկայի երեք հնարք. ընդգրկում է «զուգորդված» բառը, թվարկում է հանցագործություններ, որոնք կազմում են բաղկացական հանցագործություն, ընդհանրացված եզրույթով մատնանշում է մի շարք հանցագործություններ, որոնք մտնում են բաղադրիչ գործողության օբյեկտիվ կողմի մեջ: Եթե օրենսդիրը ոչ համարժեք է արտացոլում հանցակազմի հատկանիշները, ապա որակման սխալներն անխուսափելի են:

Բարդ հանցակազմի առաջին հատկանիշը հանցակազմի մեջ մտնող ոտնձգությունների միասնական օբյեկտն է: Սպանությունների մեջ՝ մարդու կյանքը, ձեռնարկատիրական հանցագործությունների մեջ՝ տնտեսական գործունեությունը տնտեսվարման համապատասխան ոլորտներում, ահաբեկչության, զանգվածային անկարգությունների մեջ՝ հասարակական անվտանգությունը[1]: Բաղկացական հանցագործությունները, ինչպես և բոլոր մյուս հանցագործությունները, անմիջական օբյեկտի սահմաններից դուրս չեն գալիս: Այդ պատճառով էլ կարծում ենք, որ նման բաղկացական հանցագործությունների դեպքում արարքը պետք է որակել միայն այդ օբյեկտին վնաս պատճառելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով: Ընդհանրապես ճիշտ կլիներ հրաժարվել նման հանցակազմերից և այլ հանցագործությունների հետ զուգորդվածությունը չնախատեսել որպես ծանրացնող հանգամանք:

Բաղկացական հանցագործությունների օբյեկտի միասնությունը, մեր կարծիքով, բացառում է նրանց բազմաօբյեկտությունը: Նրանց մեջ մտնող հանցագործությունների օբյեկտները կորցնում են իրենց ինքնուրույնությունը՝ մտնելով բաղկացական հանցագործության օբյեկտի մեջ:

Օրինակ՝ ահաբեկչությունը ներառում է պայթյուններ, հրկիզումներ, այլ գործողություններ, որոնք մարդկանց զոհվելու, զգալի գույքային վնաս պատճառելու կամ այլ հանրորեն վտանգավոր հետևանքների վրա հասնելու վտանգ են ստեղծում: Օբյեկտները, որոնք մտնում են հանցակազմերի մեջ, տարբեր են՝ մարդկանց կյանքը, առողջությունը, սեփականությունը, հասարակական և միջազգային կարգը: Մտնելով բաղկացական հանցագործությունների մեջ՝ նրանք կորցնում են ինքնուրույն օբյեկտի հատկությունները և ներառվում են (ահաբեկչության դեպքում) հասարակական անվտանգության մեջ: Երբ գործողության բաղադրիչները կոնկրետ դեպքերում պահպանում են ինքնուրույն նշանակությունը, պահանջվում է կատարվածը որակել հանցագործությունների իրական համակցության կանոններով: Օրինակ՝ ավազակախմբի անդամը ավազակախմբի նպատակներից ու ծրագրերից դուրս, «ինքնուրույն նախաձեռնությամբ», անձնական հակակրանքից բխող դրդապատճառներով հրկիզում է իր հարազատի ավտոմեքենան: Այսպիսի հարձակումը, ըստ ՔՕ հոդ. 191-ի, որակում են ինքնուրույն, որպես ուրիշի գույքի ոչնչացում: Իսկ եթե ավտոմեքենաների հրկիզումը մտնում է ավազակային հարձակումների նպատակների մեջ, հանդիսանում է դրա կատարման եղանակ, ապա համակցությունը բացակայում է:

Բաղկացական հանցագործությունների մեջ մտնող հանցագործությունները պետք է ըստ կատեգորիայի լինեն ավելի ծանր կամ հավասար վտանգավորության, լինեն, քան ինքը՝ բաղկացական հանցագործությունը: Ավազակությունը, ինչպես և որակյալ սպանությունը, պատկանում է առանձնապես ծանր հանցագործությունների չորրորդ կատեգորիային: Այդ կապակցությամբ այն չի կարող ծառայել որպես սպանության բաղադրիչ: Գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ սպանության որակյալ հանցակազմերը միշտ պահանջում են ինքնուրույն որակում և ոչ մի այլ հանցագործությունների հետ չեն զուգակցվում: Նշվել է, որ «նույնիսկ ավազակությամբ զուգակցվող սպանության ամենատարածված մեկնաբանությունը թույլ

---

[1] Տե՛ս **Агапов П.**, Уголовно-правовая характеристика нападения при бандитизме // Уголовное право, 2005, № 2, էջ 4–7:

չի տալիս սեփականության նկատմամբ ոտնձգությունը համարել նրա օրգանական բաղադրիչ»[1]: Բայց, ինչպես արդեն նշել ենք, հանցակազմի նման կառուցվածքից պետք է հրաժարվել: «Զուգակցվող» եզրույթը բացատրական բառարանում բնորոշվում է ոչ թե որպես «ներառված», այլ որպես «փոխկապակցված, ուղեկցող»: Մի շարք հեղինակներ սպանությունների վերոհիշյալ «զուգակցվող» տեսակները չեն ընդունում որպես բաղկացական հանցագործություններ[2]:

Հաջորդ խնդիրն այն է, թե արդյոք արարքը պետք է համակցությամբ որակվի այն դեպքերում, երբ հանցակազմի հատկանիշ է որևէ այլ հանցանքի միջոցով այն կատարելը: Մեր կարծիքով պետք է որդեգրել հետևյալ կանոնը. եթե որևէ այլ հանցանքը նախատեսված է որպես հանցակազմի հատկանիշ, ապա անկախ նրանից՝ դրա համար ավելի խիստ պատասխանատվություն է սահմանված, թե ոչ, արարքը չպետք է որակել համակցությամբ՝ կրկնակի դատապարտման արգելքը չխախտելու համար, իսկ եթե այլ հանցանքի կատարումը նախատեսված չէ որպես հանցակազմի հատկանիշ, ապա այն պետք է ինքնուրույն որակում ստանա: Օրինակ՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու հետ կապված խուլիգանության դեպքում արարքը պետք է որակել միայն որպես ծանրացնող հանգամանքներով խուլիգանություն: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ նման դեպքերում անհրաժեշտ է որպես հանցանք-եղանակով հանցանքի կատարման համար օրենքով ավելի խիստ պատասխանատվություն սահմանվի, քան զուտ եղանակ համարվող հանցանքի համար:

Ինչ վերաբերում է մի քանի հետևանքներ առաջացրած կամ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններին, ապա նման դեպքերում համակցությունը բացակայում է:

Կարծում ենք, որ վերոգրյալ առաջարկություններն ու դրույթները կարող են նպաստել քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

СОВОКУПНОСТЬ ПРЕСТУПЛЕНИЙ И КВАЛИФИКАЦИЯ СОСТАВНЫХ ПРЕСТУПЛЕНИЙ

Татевик Геворгян
Аспирант кафедры права АрГУ

В статье рассматриваются проблемы по квалификации составных преступлений и совокупности преступлений. Были выявлены все возможные проблемы и недостатки, касающиеся и практики, и законодательной сферы. Составные преступления — единые сложные преступления, слагаются из двух или более преступлений, которые, при изолированном их рассмотрении, являются самостоятельными преступлениями, но в силу их органичной взаимосвязи причиняют комплексный ущерб одному объекту. Именно единичность объекта делает их едиными, а не совокупными преступлениями, входящими в составные деяния.

[1] Տե՛ս **Шишко И.В., Хлюпина Г.Н.,** Квалификация составных преступлений в практике Верховного Суда РФ // Современные проблемы уголовного права и процесса: Материалы междунар. науч.-практ. конф., в 2 т., т. 1. Красноярск, 2003, с. 125-126:

[2] Տե՛ս **Плаксина Т.А.,** Социальные основания квалифицирующих убийство обстоятельств и их юридическое выражение в признаках состава преступления, Барнаул, 2006, էջ 192-201:

MULTIPLE OFFENCES AND QUALIFICATION OF COMPOUND CRIME

Tatevik Gevorgyan
PhD Student at the Department of Law
at Artsakh State University

The article considers the issues of qualification of compound crime and multiple offences. Compound crime is a single complex offense composed of two or more intentional offenses, which when considered separately are independent crimes, but due to their organic correlation cause complex damage to one object. It is the oneness of the object that makes them single not multiple offences included in composite acts. All possible problems and disadvantages relating to both practice and legislative sphere were identified. He has also made new proposals, which in the future could contribute to the solution of these problems and the improvement of this institution.

Բանալի բառեր – հանցակազմ, հանցագործությունների համակցություն, բաղկացական հանցագործություններ, դիտավորյալ հանցագործություններ, միասնական օբյեկտ:
Ключевые слова: состав преступления, совокупность преступлений, составные преступления, умышленные преступления, единый объект.
Key words: corpus delicti, multiple offences, compound crime, intentional offences, oneness of the object.